

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մի թիֆլիսցի օրիորդ, որ ուսում է առել Գալանան օրիորդաց դպրոցում, խնդրում է մեզ յայտնել, որ ցանկանում է մասնաւոր տնկարում դասեր տալ՝ թւաբանութիւնից, պատմութիւնից, աշխարհագրութիւնից, բնական գիտութիւններից, հայերէն լեզուից և նոյնպէս ռուսերէն լեզուից փոքր մանուկներին: Հասցէն կարելի է իմանալ «Մշակի» խմբագրութեան մէջ:

«Тифл. Объяснения» քաղաքը հաղորդում է որ զեկտեմբեր ամսից հրատարակվելու են թիֆլիսում երկու նոր լրագիրներ ռուսերէն լեզուով մինը «ДЕНЬ» (Օր) ամենօրեայ, իսկ երկրորդը «СВЕТЪ» (Լոյս), չարաթը երեք անգամ:

ՇԱՄԱԼՈՒԹՅ մեզ գրում են: Հորերումս քաղաքի մօտակայքում գտնվող գիւղի քահանային գիշերով գնում է մէկ գիւղացու տուն, որի տէրը բացակայ է լինում տանից: Տէր-հայրը զարկում է դուռը, բայց կինը չէ բաց անում, ասելով թէ մարդ տանը չէ և թէ կէս գիշերին չէ կարող ընդունել նրան: Տեսնելով, որ ոչինչ հնար չը կայ կնոջը համոզելու, քահանայն բարձրանում է տանիքը և օջախի ծակից ներս ընկնելով տուն, կամենում է բռնաբարել կնոջը, որ պաշտպանում է իր անձը, մինչև որ դրացիները օգնութիւն են համուսնու գտնում են քահանային տան մէջ տեղում կանգնած:

Մեզ հաղորդում են ՍՊԱՆԻԱ հետեւեալը: «Չորսուսի 3-ին Սանթի փոստատանից կորաւ 4,000 բուրլ գումարը: Միւս օրը երեկոյեան գտան այդ փողը փոստատան կառավարչի մանկան սայլակի մէջ: Կառավարիչը վաղից Շիւկով բանտարկված է սրա մասին: Քննութիւնը սկսված է»:

Նորերումս հրատարակեցաւ Լայպցիգում, Բերոկհաուզի մօտ, ռուսերէն լեզուով մի գիրք, անչայտ հեղինակի Համաներ Ռուսաստանի ներկայ դրութեան մասին» (Письма о современномъ состоянии России) փերագրով կառավարութիւնը թող տուել այդ գիրքին Ռուսաստանի մէջ մտաբեր: Գիրքը բաղկացած է 148 երեսից և խօսում է Ռուսաստանի պաշտօնական դատարարի, կառավարչական հիմնարկութիւնների, մամուլի, պետական բիւրօների, ուղղափառ եկեղեցու, ռուս ազանդների, գիւղացիների հոգիների, պետական հարկերի և այլ ամենահետաքրքիր ժամանակակից հարցերի մասին: Գիրքը առաջարկում է տալ ազատութիւն մամուլին, գումարել ռուսաց խորհրդակցական (совѣщательный) ազգային ժողով, ինչպէս որ լինում էր Պետրոս Մեծից առաջ, խորհուրդ է տալիս հրատարակել կրօնների ազատութիւնը և այլն: Գիրքը հեղինակը իր ուղղութեամբ երեւում է թէ պատկանում է սլավոնոֆիլների կուսակցութեանը: Եւրօպական պետական կաղմակերպութիւնը, եւրօպական սահմանադրութիւնները նա խաբէրալութիւն է անուանում: Առհասարակ գիրքը, ինչքան էլ թույլ կողմեր ունենայ, նրան արժէ կարգաւ թիֆլիսում այդ գիրքը կայ արդէն:

«Русскій Курьеръ» քաղաքը, որ ինչպէս յայտնի է, չորս ամսով արգելիցեալ կառավարութիւնից, երեկվանից սկսած այլ ևս չէ գալիս թիֆլիս:

Այս օրերս մի երիտասարդ կամենալով մանկ ռուսաց ուսումնարաններից մէկը, գնում է թիֆլիսի հայոց կօնսիստորիա և պահանջում է որ տան նրան ծնողեան վկայականը: Բայց կօնսիստորիան այսօր վաղը գցելով, երկար ժամանակ չէ տալիս երիտասարդին նրա պահանջած մետրիկականը: Վերջապէս երիտասարդը ստիպվում է 30 բուրլ ընծայել կօնսիստորիայի ծառայողներից մինին և իսկոյն ստանում է իր վկայականը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

Վիեննայից հեռագրում են անգլիական «Standart» քաղաքին որ Ռուսաստանը ա-

ջակցում է Լօրդ Գլօբերնի ջանքերը Կ. Պոլսի մէջ թիւրքաց չայաստանում բէֆօրմնի մտցնելու վերաբերութեամբ: Միւս պետութիւնները չէզօք են պահում իրանց առժամանակ այդ խնդրի վերաբերութեամբ, նրանք փոքր ինչ կասկածաւոր աչքով են նայում ռուս-անգլիական միջամտութեան վրա: Թէև եւրօպական միւս պետութիւնները բոլորն էլ հասկանում են Արմենիայի մէջ բէֆօրմնի իրադրման անհրաժեշտութիւնը, բայց այժմեան լուսին յարմար չեն համարում անգլի այդ խնդրի շուտով լուծելու մասին:

Այդ լուրը արտասպելով «Донская Пчела» ռուս լրագիրը կրկին նուիրում է մի առաջնորդող յօդուած հայոց խնդրին: Ահա այդ յօդուածը:

Այս րօպէիս ամենահետաքրքիր խնդիրը հայոց խնդիրն է, քանի որ նա կաղմում է մի մաս այն Գորդեան հանդիման, եւրօպայի համար, որ անուանվում է առեւելեան խնդիր: Բոլոր եւրօպական պետութիւնները, որոնք շահ ունեն արեւելեան հարցի խաղաղ կերպով վճռվելու մէջ, միակերպ ցանկանում են շնորհել հայերին, ինչպէս Օսմանեան պետութեան ամենաքաղաքակիրթ ազգին, ինքնավար քաղաքական գոյութիւն: Ռուսաստանը և նրանից յետոյ Անգլիան համոզվելով, որ թիւրքաց կառավարութիւնը որ զուրկ է մարդասիրական սկզբունքներից և իրան յատուկ անտարբերութեամբ նայում է իր ստրկացած ազգերի անմիջեւ գրութեան վրա, որոնք մահմետականութենից ջուկ կրօն են դաւանում, կարելի է դրականապէս ասել այն եզրակացութեանը հասան որ անհրաժեշտ է, եթէ կարելի է, դիւանագիտական ծանապարհով, անյապաղ վճիռ տալ հայոց խնդրին: Վճռել այդ խնդիրը այդ ծանապարհով հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ Ռուսաստանը, որպէս թիւրքաց չայաստանի հարեան պետութիւն, և ուրեմն իւրաքանչեւ ունեցող հոգալ իր հեղինակութեան պահպանելու մասին այդ երկրի մէջ, և Անգլիան, որ յանձն առաւ հովանաւորութիւն փոքր-Ասիայի թիւրքաց նահանգների վրա, վերջ կը գնեն իրանց փոխադարձ թերահաւատութիւնների արեւելեան քաղաքականութեան վերաբերութեամբ: Վերջին ժամանակ աւելի և աւելի յայտնվում են այդ երկու պետութիւնների մէջ համաձայն գործողութեան և միմեանց մօտենալու նշանները և այդ պատճառով մեզ ներքին կը լինի ենթադրութիւն անել, որ թիւրքաց հայերի վիճակը մօտիկ ապագայում ապահոված կը լինի:

Այժմեան ժամանակին հայոց խնդիրը, շարունակում է ռուս թերթը, պաշտպանվում է և առաջ է տարվում նոյն իսկ հայերի ձեռքով: Նրանք հասան ինքնաշահութեանը, նրանք պարզ դուրս են որ արժանի են աւելի լաւ վիճակի և այլ ևս չեն կարող ստրկութեան մէջ մնալ: Հայերը ապրում են ոչ թէ միայն թիւրքիայում, բայց և Ռուսաստանը բազմութիւն հպատակներ ունի այդ ազգից և հայոց ինտելիգենցիան կենտրոնացած է այժմ թիֆլիսում: Այդ պատճառով, շարունակում է «Донская Пчела» թերթը, եթէ թիւրքիան յամառութեամբ հրաժարվում է հայերին կառավարելու սխտեմայի մէջ ամեն տեսակ բարենորոգումներից և բէֆօրմներից, այն ժամանակ այդ գործը պէտք է իր ձեռքն առնի մի կողմից Ռուսաստանը, որ նրա հետ բաժանում է քաղաքական իշխանութիւնը հայոց ազգի վրա, և միւս կողմից Անգլիան: Իսկ ֆինացի պետու-

թիւնները՝ Գերմանիան, Իտալիան, Ֆրանսիան և Աւստրո-Ունգարիան, որոնք նոյնպէս շահ ունեն այս կամ այն կերպ վճռված տեսնելու արեւելեան դարեւոր խնդիրը, պէտք է կարծել որ նոյնպէս չեն յապաղի միանալ լիշեալ երկու պետութիւնների հետ, երբ նրանց կը խոտաւաղի, որ վերականգնեցրած Արմենիան նոյն կազմակերպութիւն կունենայ, ինչպէս օրինակ բօլգարական իշխանութիւնը:

ԲՈՒՄԻՆԻԱ

«Порядокъ» քաղաքի մէջ տպված է հետեւեալ թղթակցութիւնը:

Տգիտութիւնը և խաւարը ամենից շատ վտանգաւոր են ինչպէս մասնաւոր նոյնպէս և հասարակական գործերի մէջ: Սահմանադրական պետութիւնների մէջ մամուլը այն պատճառով է նշանաւոր տեղ բռնում, որ նա մի ձրի միջոց է իմանալու համար այն բոլորը, ինչոր կատարվում է հասարակական կեանքի ամենաճաճկված անկիւններում: Կառավարութիւնը ծանօթանում է այս կամ այն տեղի պէտքերի և պահանջների հետ, հասկանում է ոչ թէ միայն այս կամ այն ժամանակակից հասարակական վերանորոգութեան անհրաժեշտութիւնը, այլ և ստանում է ընդունակութիւն ապագան նախատեսելու համար: Մի խօսքով մամուլը համարձակ կարող է անուանվել մի պահպան, որ մշտապէս արթուն հսկում է ժողովրդի հասարակական և ազգային շահերի վրա: Երբ մամուլը կատարում է հասարակական այսպիսի կոչում, այն ժամանակ նրան իրաւացի կերպով կարելի է պետական չորրորդ ոյժ անուանել:

Բուլնիական ազգութեան համար ծանր և տխուր ժամանակներում գոյութիւն ունէր «Romanul» քաղաքը, որ հիմնված էր բուլնիական ժողովրդի ամենաուսանող գործիչներից մէկի Ս. Ա. Բօսեւիի աշխատանքներիով: Գեռ 1848 թուականին այդ քաղաքի հիմնողը շատ անգամ ենթարկվել է բանտարկութեան, արտաքսման և մինչև անգամ աքսորանքի: Բայց հաստատրիմ մնալով իր սկզբունքներին, որոնք նրա արեւ և մարմին էին դարձել, նա ոչ մի անգամ չը դաժանեց նրանց և չը շեղվեցաւ մի անգամ ընտրած ծանապարհից և նրա հիմնած քաղաքը հասաւ այն նպատակին, որ որոշել էր նրա հիմնողը: Այս տարի օգոստոսի 3-ին կը լրանայ 25 տարի, ինչ այդ քաղաքի գոյութիւն ունի: Այդ առիթով այդ տեղական քաղաքի բոլոր խումբադիրները և աշխատակիցները պատրաստվում են տօնել նրա 25 ամեայ յօբելանսը: Այդ քաղաքի պատմական նշանակութիւնը, հրատարակչի անձնաւորութիւնը, որ ազատամիտ կուսակցութեան առաջնորդ է համարվում, այդ մասնաւոր տօնին աւելի ընդարձակ բնաւորութիւն են տալիս և կարելի է հաւատացած լինել, որ երկրի քաղաքական բոլոր կուսակցութիւնները կը մասնակցեն պատրաստվող հանդիսին:

Որովհետեւ այս անգամ ևս սկսեցի մամուլի մասին խօսել, ուրեմն այդ նիւթի վրա էլ կը շարունակեմ գրել: Բուլնիայի մէջ ներկայումս հրատարակվում են 39 ամենօրեայ թերթեր, որոնցից միայն 32 կախումն ունեն կառավարութեանից, որովհետեւ ֆինացի 7 թերթերը կառավարութեանից են հրատարակվում: Համաձայնեցէք, որ մի փոքրիկ, հինգ միլիօն ազգաբնակչութիւն ունեցող պետութեան համար լրագիրների այդ թիւը բաւական նշանաւոր է: Բայց բացի այդ քաղաքներից կան և շա-

րաթական և ամսական տեսութիւններ, որոնց կարելի է համեմատել արեւմտեան այդպիսի հրատարակութիւնների հետ: Մեզ այժմ պակաս են գիտնական հրատարակութիւններ և պակաս են ոչ թէ այն պատճառով, որ նրանց կարգացող և պահպանող հասարակութիւն չը կայ, այլ այն պատճառով, որ Բուլնիայի մէջ մինչև այժմ լրագիրների և ամսագիրների հրատարակողները ամբողջապէս նուիրված են իրանց նիւթական շահերին և հրատարակութեան գործի վրա բուն առեւտրական տեսակէտից են նայում: Ծանր գիտնական հրատարակութեան ընթերցողների թիւը բաւական սահմանափակված է, հետեւապէս այդպիսի հրատարակութեան օգուտներն էլ բաւական աննշան կը լինեն, մինչդեռ քաղաքական լրագիրը միշտ տարածվում է, միայն թէ նա այնպիսի անձից հրատարակվէր, որ քաղաքական որ և է ուղղութիւն ունենար: Այդ պատճառով մեր լրագիրները այս կամ այն քաղաքական անձաւորութեան կամ այս կամ այն քաղաքական նախագծի արտայայտողներ են: Մեր միտքները մէջ հազաւագիւտ է այնպիսին, որ իր քաղաքական լրագիրը չունենայ, մեր պետական գործիչներից գրեթէ իւրաքանչիւրը հրատարակել է մի լրագիր, որի էջերի օգնութեամբ նա անց է կացրել իր քաղաքական նախագիծը:

Պէտք է իրաւացի լինել բուլնիական ընթերցող հասարակութեան վերաբերութեամբ, նա ամենակարճ ժամանակամիջոցում սկսել է չափազանց հետաքրքրվել տպագրական խօսքով և ներկայումս հազաւագիւտ է այնպիսի մի հիւրանոց, ճաշարան, խոհանոց, խանութ, որ չը ստանար մայրաքաղաքի կամ տեղական մի որ և է քաղաքական լրագիր: Ամենքը կարգում են, բայց թէ ի՞նչ են կարդում այդ այլ խնդիր է, բայց այնու ամենայնիւ կարդում են և հետաքրքիր են իմանալ, թէ ինչ է կատարվում ամբողջ աշխարհի և իրանց երկրի մէջ: Առժամանակ այդ էլ բաւական է մի ժամանակ ծաշակն էլ ու կրիտիկան էլ կը զարգանան և այդ ժամանակ գրականութիւնը ստիպված կը լինի ընդարձակել իր շրջահայեցողութիւնը և հոգալ այն ձեւերի մասին, որոնցով նա մտքեր և գաղափարներ է քարոզում տպագրական խօսքի օգնութեամբ:

ՆԱՄԱԿ ՖԲԱՆՍԻԱՅԻՑ

Փարիզ 10 օգոստոսի
Արախութիւնով լսեցինք, որ Վիեննայում մի չարաթակթերթ է հրատարակվում «Journal d'Orient» վերնագրով, որը իրան ամբողջապէս արեւելեան խնդրին է նուիրել: Այս քաղաքից դէն 18 ամիս գոյութիւն ունի և միշտ պաշտպանել է արեւելեան ազգերի իրաւունքները: Վերջին ժամանակներից նա սկսեց մասնաւորապէս հայոց հարցով պարագլու և մի քանի րօպէս հայոց հարցով պարագլու «Question armenienne» յօդուածներ հրատարակել «Question armenienne» վերնագրով, խմբագրութիւնը խոտաւաղում է միշտ սիրով պաշտպանել հայոց դատը, եթէ ի հարկէ մի որ և իցէ համակրութիւն գտնի մի ազգամիջեանի կողմից: Մենք, որ կարողացել ենք այս գրութեանը, հաւատացած ենք, որ նրանք կաղաք են ուղարկել իրանց վրա, և այս հրատարակութիւնը իր ուղղութեամբ այս հրատարակութիւնը իր ուղղութեամբ կարող էր գոցել լրացնել մեր ամենիս ցանկութիւնը: Եւրօպայում մամուլի միջոցով հայկական շահերի պաշտպանութեամբ:

Ռուսի փարիզի հակապետ ռուսախօսները քննարկութիւնը պատուիրեցին ինչ թղթակցութեան մասին «Journal d'Orient» քաղաքի պ. խմբագրի հետ և սահ ինչ է այս վերջինի պատուիր խնդր:

«Իմ քաղաքը ոչ մի նիւթական օգնութիւն չէ ստանում ձեր ազգից և ես մի բան եմ միայն խնդր-

բում ձեր շահերը այս հրատարակութեան միջոցով պաշտպանելու համար։—Եւ խնդրում եմ, որ հայերը բաժանորդագրութիւնով լրագրի տարածմանը նպաստեն։ Գուք կարող էք ամենի հաւատարմացնել, որ իմ լրագիրը ըստանձնել է ձեր իրաւունքները պաշտպանութիւնը և խոստանում է պահպանել նրան։... Եւ յուսով եմ, որ դուք կաշխատէք բազմացնել իմ բաժանորդներին թիւը գործի յաջողութեան համար։ Այլքի առաջ ունեցէք, որ մեր բաժանորդների շարքում գտնուիմ եւ Ֆրանսիայի, Անգլիայի և Ներքին-Արտաքին իշխանութեանց զիպլոմատական մարմինները։—Լրագրի 30 և 31 № №—ներ հարկաւոր օրինակներով ուղարկված են արդէն գանազան տեղեր նշանաւոր անձանց և կարեւոր հրատարակութիւններին։

Հաղորդելով ձեզ այս ուրախալի լուրը, հայկ. ընկերութիւնը խնդրում է ձեզ, պ. խմբագիր, դարձնել այս գործի վրա հասարակութեան ուշադրութիւնը և ամեն միջոցներով (որոնք գուք յարմար կը դատէք) նեցուկ և ընդարձակութիւն տալ այս կարեւոր հրատարակութեանը։

Մեծայայտ ենք որ մեր հասարակութիւնը և մասնաւորապէս հայ երիտասարդութիւնը կը բարհաճին նմանապէս տեղեկութիւններ և թղթ-թակցութիւններ ուղարկել յիշեալ շարքած-թերթին։ Այս մասին խմբագրութիւնը խնդրել է մեզ մասնաւոր նամակով և դիմել է ամենին իր լրագրի միջոցով։

Բաժանորդ գրովոնները կամ թղթակցութիւններ ուղարկողները (թղթակցութիւնները կարող են հայերէն լեզուով լինել) կարող են դիմել հայկազեան ուսումն. ընկ. Rue des Feuillantines 47 Paris կամ ուղղակի լրագրի խմբագրին այս հասցեով. M. F. Salles, redacteur en chef du «Journal d'Orient» Rauhensteingasse, 10 Vienne։ Այս լրագրի մասին ձեզ մի տեղեկութիւն տալու համար, ուղարկում եմ նրա վերջին համարը։

Խնդրենք մեր միւս հայ հրատարակութեանց արտատպել այս լուրը։

Հայկ. Ուսումն. ընկերութեան կողմից
Վ. Արծրունի

ՆԱՍՏԱԿ ԹԻԻՐԻՔԱՅԻՑ

Կ. Պոլիս, 2 օգոստոսի

Նիժէ կայ թիւրքերի վերին այժմ դպող մի թունալից խնդիր, զիտեք որ այդ հայոց խնդիրն է, բոլոր պետական խնդիրներից ամենահիմնականը և վտանգաւորը թիւրքիայի ոչ միայն հաստատութեան փոքր-Ասիայում, այլ նորա ամբողջ գոյութեան և ապագայի վերաբերմամբ։ Այս է պատճառը, որ թիւրք կառավարութիւնը չէ կարող մարտել հայոց խնդրի երևան գալը Ռուսաստանի ձեռքով, որը խաղաղութիւն կապելով Տաճկաստանի հետ, թողեց նորա հանգամանակեան համար մի մշտական ցաւ, որը կարող է լինել և խիստ մահաբեր առանց այն էլ հիւանդոտ թիւրքիայի կազմուածքի համար։... Ըր կարողանալով մարտել այդ խնդրը, թիւրքերն միշտ մեծապէս ուշադիր է Ռուսաստանից եկող և ռուս մամուլից դուրս ցայտող իւրաքանչիւր խօսքին և տողին, տալով նորան այս ինչ, այն ինչ նշանակութիւնը Ռուսաստանի մօտաւորտ դիտումների վերաբերմամբ իր ամբողջութեան դէմ փոքր-Ասիայում։ Թիւրքերն լինելով շատ ճաւայիկ և խորամանկ իրան սպառնացող վտանգները ըստ արժանոյն գնահատելու համար, շատ լաւ գիտէ որ չափ էլ Անգլիան հետամուտ լինի հայոց գործին, դարձեալ նորանից այնչափ վտանգ չէ կարելի սպասել իր գոյութեան համար փոքր-Ասիայում, որչափ ռուսաց կողմից, թիւրքերն շատ լաւ գիտէ թէ ինչ մեծ ոյժ և ազդեցութիւն ունէ Ռուսաստանը փոքր-Ասիայի վրա, ունենալով Կովկասում իր ձեռքի տակ մէկ միլիոն ու կէս համաւ, խաղաղասէր, բայց արթուն և հաստատաւոր հայ ազգաբնակչութիւն, որը իր տէրութեան և իր սեփական շահերով այնչափ սերտ կերպով կապված է փոքր-Ասիայի իր երեք միլիոն համարիւնների հետ, վասնորոյ այդ մեծ ոյժը միշտ կարող է խիստ շօշափելի և նիւթական գորութիւն լինի Ռուսաստանի ձեռքում առանց պատերազմի, խաղաղ և անվրդով ճանապարհով հիմն ի վեր տապալել թիւրքիայի գոյութիւնը փոքր-Ասիայում։ Մինչդեռ այդպիսի մի յարմարութիւն և զգալի ոյժ Անգլիան ու ունի և ոչ էլ կարող է ունենալ։ Այն այս տեսակետից է, որ թիւրքաց կառավարութիւնը բերլինի դաշնադրութիւն

նը կնքելուց յետ, այսչափ հետամուտ է միշտ ռուսաց կառավարութեան և մամուլի տրամադրութեան հայոց վերաբերմամբ։ Այս է պատճառը որ «Новое Время-ի» մէջ նորերս գրված անտակտ և անմիտ յօդուածը հայոց դէմ, այնչափ լաւ մատի փաթեթման դատաւ թիւրքերի համար այս տեղի հայ ինտելլիգենցիային հաւատացնելու թէ՛ «ռուս տէրութիւնը միշտ թըշնամի և ատող է եղել հայերին» և այլն այսպիսի յիմարութիւններ։ Բայց «Новое Время-ի» անտակտ և կարճամիտ դատողութիւնները, որոնք արտատպվեցան բոլոր թիւրքաց լրագիրներից, չը կարողացան երկար պահել իրանց նշանակութիւնը։ Այսօր երեւոյ Phare du Bosphore-ի մէջ «Порядок» լրագրի № 202 առաջնորդող յօդուածը հայոց խնդրի մասին, այդ յօդուածով յարգելի լրագրի յայտնած գործնական և խոստումներ մահաբեր ուսմբի պէս ճայթեցին թիւրք մամուլի զինին, անկարագրելի ազմուկ և զգրդիւն յարուցանելով, առանց այն էլ սրտերի մէջ ռուսներից միշտ սարսափահար, թիւրքերի մէջ։ Առում եւ, որ Սայիթ-փաշան, աչքի անցնելով այդ «թունալից» յօդուածը, խիստ վրդովված կանչել է տպագրութեան ընդհանուր տեսչին և սպառնալից կերպով յանձնարարել, որ եթէ միւս անգամ էլ երևան Ա. Պօլսի լրագիրների մէջ այդպիսի «գայթակղական» յօդուածներ, տեսուչը չարաչար կերպով պատասխանատու կը լինի։ Բայց եղած ազդեցութիւնը արդէն եղաւ և թիւրքիայի տէրութիւնը կրկին եւ հոմոզկեց, որ իր յօյը՝ իրր թէ ռուսաց կառավարութիւնը չընչուս գործելով իր հպատակ հայերի վրա (թիւրքաց կարծիքով) միշտ ի նպաստ թիւրքիային մի բարեբար գործ արած կը լինի, էլ այդ յօյը կրկին ապացոյցով օղը ցնդկեց, որովհետեւ այս օր նա տեսաւ, որ կիսապաշտօնական լրագրի բի էջերում անգամ միանգամայն աներկրի կերպով, առաջարկվում է ռուս հասարակութիւնից տալ հայերին Կովկասի հէջ բոլոր ուրիշ փոքրիկ աղբիւրի շահերին եւ համապատասխանող առանձին մենաշնորհաւ գրութիւն։ Կնչպէս միշտ երախտալից հպատակ և իր ազդութիւնը յարդող իւրաքանչիւր հայ ի հարկէ չէ կարող բոլոր սրտից չողջունել «Порядок» լրագրի մէջ յայտնած դադափառները որոնք ուրախութեամբ պիտի ասած օրից օր ռուս ինտելլիգենցիայի անխախտ համոզմունքն են դառնում Հայաստանի և ռուսաց շահերի վերաբերմամբ։

Նկատողութեան առնելով այսպիսի մի սերտ և անբաժան համերաշխութիւն Ռուսաստանի և հայոց շահերի մէջ փոքր-Ասիայում, որչափ ցաւալի է տեսնել, որ Ֆրանկլինի թողած յիշատակի տխուր ազդեցութիւնը դեռ բոլորովին չէ կորցրած իր հետքերը, որովհետեւ թիւրք մամուլը մինչև հիմայ եւ չարունակում է պնդել թէ՛ «ռուսները թշնամի են հայերին, որովհետեւ Ղարսի նահանգի մէջ արգելում են հայերին բնակութիւն հաստատել, Բաթումի մէջ չեն թողնում հող գրնել» և այլն այսպիսի բաներ։ Նիժէ այս բաները դեռ տեղի ունեն մինչև հիմայ եւ—որ յուսով ենք էլ հաւանականութիւն չունեն—ցանկալի է, որ շուտով վերանան այդ վնասակար կաղապարութիւնները զանազան ստոր վարչական կառավարչների կողմից, որոնց չափազանց կռաւորչներն միշտ այդչափ վնասակար է եղած տէրութեան մեծամեծ և էական շտեմերն, որ և իցէ մի նահանգի մէջ մի քանի հազար հոգի երկրագործ հայ աւել կամ պակաս չենք կարծում որ փոխարինեն այն ընդարձակ շահերը, որ ունէ Ռուսաստանը համայն փոքր-Ասիայի մէջ։...

Այս տեղի հայ մամուլի մէջ եւ ի հարկէ կան այնպիսիները, որոնց համոզմունքի վրա կարողանում են ներգործել թիւրք լրագիրների արծարծած չարակամ մտքերը, վասնորոյ մէկը հայ լրագիրներից քննելով այս օրերս հայոց դրութիւնը Կովկասում, բաւական թերահաւատութիւն էր ցոյց տալիս հայ մամուլի ընդհանուր օպտիմիզմի (լատստիստիկեան) վերաբերմամբ, իսկ մի քիչ յետոյ ենթադրելով, որ յիշաի եթէ Ռուսաստանն անհրաժեշտ շահերը պահանջին Կովկասի հայերին մենաշնորհաւ (привилегированный) գրութիւն տալ, այն ժամանակ ինչով պիտի սկսին այդպիսի մենաշնորհութիւններ։ Խօսելով այս այդպիսի յօդուածապիւրը ասում էր, զուցէ ոչ առանց իրաւունքի, թէ՛ «այդ մենաշնորհութիւնները պիտի սկսվեն նախ՝ Ղարսի նահանգին կից հայաբնակ գաւառներին տալ կատաղեալ ազատութիւն տեղափոխվել որչափ թուով

որ ցանկանան Ղարսի նահանգը, երկրորդ՝ Կովկասի համալսարանի մէջ հայոց լեզուով եւ դասախօսութիւններ անելը ազատ և պարտաւորի լինի, երրորդ՝ երևանի նահանգում ուժովացնել հայոց տարրի մտաւոր և բարոյական ազդեցութիւնը, լեզուի տիրապետութիւնը և այլն»։ Ահա այս մի քանի հայեացքներ մէջ բերելով, ուղեցի տեղեկացնել ձեզ թէ որչափ մեծ յեղափոխութիւն կարող են անել ի նպաստ մեր տէրութեան շահերին այստեղ մի քանի բարեմիտ և ազատասիրտ ռուս լրագիրների յօդուածները։ Այս կողմից մեծապէս շնորհակալութեան արժանի են ի հարկէ նախ «Голосъ-ը» յետոյ «Русский Курьеръ-ը» և միւսերը, նմանապէս և թիֆլիսի ռուս լրագիրները, որոնք այդչափ լաւ կերպով են ըմբռնած ռուսաց տէրութեան և ընդհանուր հայերի շահերը ինչպէս Կովկասի մէջ, այնպէս և ամբողջ փոքր-Ասիայում։

Վրիգոր Նիկողոսեան

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մի ամերիկական լրագիր հաղորդել է՝ որ նորորումս Ամերիկայի Տենեսի նահանգում մի կին ծնել է մի անգամից 7 երեխայ, որոնք բոլորն էլ առողջ են և միմեանց սաստիկ նման։ Կնոջ ամուսինը մի փոքրիկ հասակի և նիւստ մարդ է, իսկ ինքը մայրը բարձրահասակ և չափ առողջ կին է։ Շատերը գնում են եօթ երեխաներին, բնութեան այդ հրաշքը տեսնելու։

Կ. Պօլսի «Փոստ» լրագրում կարդում ենք հետեւեալ ծիծաղելի յօդուածը։ «Տփիսիսի նշանաւոր և բազմածառութ ազգայիններէն Վսեմ. Իշխան Ամատունին ուրբաթ օրը մայրաքաղաքս գալով՝ Իշխանի Անգղիական օթկանին իջաւ։ Նորին Վսեմութիւնն հետեւալ օրը փութացաւ ի տես Ս. Պատրիարք Զօր և քանի մը ժամ խօսակցեցաւ։ Կիրակի օր ալ իւր ներկայութեամբը պատուեց Խաժիւտարի Խճախէջի Մեղպուրեան իղական վարժարանի մրցանակարաշխութեան հանդէսն, որ ամենաշքեղ կերպիւ կատարուեցաւ։ Ընդ նախադահութեամբ Ս. Պատրիարք Զօր, Իշխան Ամատունի նախնի հայկազանց տիպի ու տիպարը կը կրէ, յաղթահասակ, վարկազեղ, դուրթաղէմ և դեռ յարբունտ, իր նախնիքն Հնդկաստանէն բազմադանձ ձօխութեամբ Կովկաս անցեր, պատուով և մեծարանք ընդունուր են վրաց թագաւորէն, և ի կարեւոր հարկի մեծ փոխառութիւն մ'ընելով վրաց թագաւորութեան, ապա հարկադրուր են Կուր գետին մէկ կողմը ընդարձակ քայքայ յայնժամ անարժէք երկիր մը ընդունիլ ի փոխարէն, որ սակաւ արժէք ստացեր է՝ գիւղերու գիւղաքաղաքներու վերածուելով։ Իշխան Ամատունի Բեղբւորաւորին հաւաքարանին մէջ ռուսմիտ առած է. Հայ լեզուն ու ազգութիւնն միշտ սիրելի եղած են իրեն, և ի սէր Հայ լեզուի ու ազգութեան ոչինչ ինտայն չէ ցարդ. Տփիսիսի ամեն կարգի ազգայինք և լրաթերթը կը վկայեն։ Իշխան Ամատունի Տփիսիսի հայկական թատրոնին յառաջադիմութեան համար ալ նիւթապէս ու բարոյապէս օժանդակած է, զիտելով քաջ թէ թատրոնը ալ իրեն վարժարանը և լսարանը կոչունէ ազգային լեզուի ու բարոյականութեան զարգացման։ Եւ արդարեւ Տփիսիսի Հայն՝ որ քանի մի տարի յառաջ ամենամեծ մասամբ զուրկ էր Հայ լեզուէ և իրեն օտար իմն էր իրեն համար, և ի սկզբան հաստատութեան Հայ թատրոնի՝ իրեն օտարազգի կը ձանձրանար, այժմ ամենամեծ մասամբ կը յաճախէ և կ'օգտի՝ ընտելանալով մայրենի գիւղեցիկ լեզուին և սկսելով կապուիլ ազգային կապերով։ Իշխան Ամատունի անմոռանալի բարեբարութեանց միմն է այս։ Նորին Վսեմութեան վրայ այս համառօտ ծանօթութիւնն մեր ազնիւ ընթերցողաց հաղորդելէն յետոյ, խնդրութեամբ կը հնորհաւորենք իւր գալուստն ի մայրաքաղաքս թիւրքիոյ, և կըղձմք որ մեր բազմակրօտ Աղզն ունենայ բաղում Հայ մեծամեծների՝ այս ոգւով և այս սրտով։ Իշխանին հետ մայրաքաղաքս եկած է Տփիսիսի ազգային երեսիկ փաստաբաններէն Մեծ. Աղա Բարոնը Շահնշանց ալ կը բնեմք, թէ առաջիկայ շարժու կը մեկնին Օտէսա կամ Վիեննա երթալու համար»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 օգոստոսի։ Այսօր փոխանակվեցան վաւերացրած դաշնադրութեան Ռուսաստանի և ջինստանի մէջ։
ՆԻՒԻՒՐԿ, 7 օգոստոսի։ «Herald» լրագրի մէջ տպված է Գարամանի նամակը, որով նա հաղորդում է, թէ վերագործել է Նիւ-Խորկ և, եթէ հարկաւոր լինի, կը փորձի ապաստանի իրաւունքի ոյժը դատարանի առաջ։ Այսօր Գարաման յայտնեց իր ցանկութիւնը Ամերիկայի քաղաքացի դառնալ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 օգոստոսի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է ներքին գործերի մինիստրութեան կարգադրութեամբ «Новая Газета» լրագրին առաջին նախագրողութիւն է տուած և արգելված է նրա համարների հատով ծախվելը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 օգոստոսի։ «Новая Газета» լրագրի մէջ այսօր տպված է հետեւեալը. խորին ցաւով այսօր մենք ստիպված ենք յայտնել մեր ընթերցողներին, որ «Новая Газета» այլ եւ չի հրատարակվի։ Մենք պատրաստ էինք ծառայել թանգազին հայրենիքին մեր հոգու բոլոր ոյժերով, բայց կարելութիւն չենք գտնում շարունակել մեր լրագրի հրատարակութիւնը և դադարեցնում ենք նրան 8 համար հրատարակելուց յետոյ։ Մեր պրօգրամը յայտնի էր հրատարակութեանը և մենք ոչ մի բան այնքան եռանդով չենք պաշտպանել, որքան լուսաւորութեան շահերը և Ռուսաստանի քաղաքական, հասարակական և բարոյական վերածագման գործը։ Մեր ձգտումները մաքուր են եղել Աստուծոյ, Թագաւորի և Հայրենիքի առաջ։ Ռուս հրատարակութիւնը կարծես գնահատեց այդ ձգտումները և պաշտպանեց մեզ իր ուշադրութեամբ։ Մենք այդ հասարակութեանը յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը և յոյս ունենք, որ նա կը հասկանայ մեր վճռի անհրաժեշտութիւնը։ «Новая Газета» լրագրին ստորագրող անձինք հրաւիրում ենք յետ ստանալ իրանց փողը խմբագրութեան ժամանակաւոր գրասենեակից, Բասէյնայա փողոցի վրա, Կրակիսկու տանը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 օգոստոսի։ Պետական քանկի 5% տոմսակր առաջին շրջանի արժէ 96 ռ. երկրորդ 94 ռ. 37 կ., երրորդ 94 ռ. 75 կ., չորրորդ 94 ռ. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակր արժէ 230 ռ., երկրորդ 228 ռ. 25 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակր արժէ 91 ռ. 37 կ., երկրորդ 91 ռ. 37 կ., երրորդ 91 ռ. 37 կ., ոսկի 7 ռ. 78 կ.։ Ռուսաց 1 ռուբլ. Լժնգոնի վրա արժէ 25,75 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 220 մարկ 50 պֆ., փարիզի վրա արժէ 271 ֆրանկ 50 սանտիմ։ Բօրսայի արամաւորութիւնը ամուր է։

«ՄՇԱԿԻ» ՊԵՏԱՍՈՒՆՆԵՐ
—ՄՇԱԿԻ. Ն. Տ. Պ. Եթէ ձեր նամակը Գր. Խ. զէմ կարող էր տպվել, ինչի նրա նամակը ձեզ դէմ չէր կարող տպվել։ Ստորագրութիւններով նամակը չը կարողացանք տպագրել։ Իսկ ինչ որ վերաբերում է ձեր մեզ տուած խորհրդներին «Մշակի» ուղղութեան մասին, մենք մեղաւոր չենք, եթէ գուք հակասութիւն էք գտնում «Մշակի» ուղղութեան մէջ և չէք հասկացել նրա ուղղութիւնը։
—ԲԱՎՈՒՆ. Ն. Վ. Բոլշիւրը ձեզ ուղարկեցաւ։
—Կ. ՊՈԼԻՍ. Հայկակ. վաղուց է ձեզանից նամակ չունենք։ Գուք գիտեք որքան նշանակութիւն ունեն ձեր թղթակցութիւնները «Մշակի» համար։
—ՂՈՒԲԱ. Մ. Յ. Շատ ցաւում ենք որ կարգաւոր «Մշակը» չէք նկատում ինչ է տպված լինում նրա համարներում։ Ձեր հայելը վաղուց տպված է ներքին լուրերում։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ